ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1958 Общественные науки

Մ. Գալոյան

ԱԳՆՈՍՏԻՑԻԶՄԻ ՖՈՅԵՐԲԱԽՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Լ. Ֆոյերբախը կարևոր դեր խաղաց իդեալիստական իմացաբանության քննադատության և աշխարհի ճանաչելիությունը մատերիալիստական նոր փաստարկումներով ապացուցելու գործում։ Կանտյան ագնոստիցիզմի մատերիալիստական քննադատության առաջնության պատիվն իրավամբ Լ. Ֆոյերբախին է պատկանում։

Օբյեկտի և սուբյեկտի, զգայության և մտածողության փոխհարաբերության մասին Ֆոյերբախի ուսմունքը սերտորեն կապված է աշխարհի ճանաչելիության հարցի հետ։ Հակառակ ագնոստիկներ Յումի, Կանտի և նրանց հետևորդների, Ֆոյերբախը ցույց տվեց, որ փիլիսոփայության խնդիրն է ճանաչել օբյեկտիվ ռեալականությունը, որպեսզի «անառարկայականը դարձնի առարկայական, անըմբռնելին՝ ըմբռնելի»[1]։ Խոր համոզմունք ունենալով աշխարհը ճանաչելու մարդկային ունակության անսահմանափակ հնարավորության նկատմամբ, Ֆոյերբախը կտրականապես առարկում է այն մտածողներին, որոնք պնդում են, թե աշխարհը ճանաչելու մարդկային ունակությունն ընդհանրապես սահմանափակ է. «Մի մարդու գիտելիքը սահմանափակ է, բայց սահմանափակ չէ բանականությունը, սահմանափակ չէ գիտությունը, որքանով այն մարդկության ընդհանուր գործողությունն է»[2]։

Ֆոյերբախը հաստատում է, որ մարդկային իմացությունն անսահմանափակ է, որ իմացության սահմանափակումը հնարավոր է սոսկ պատկերացման և երևակայության մեջ։ Ֆոյերբախը մատերիալիստորեն է վերլուծում իմացության զարգացումը. նա իմացության պրոցեսը չի մեկուսացնում օբյեկտիվ իրականության զարգացումից, այն դիտում է էպոխայի փոփոխման հետ շաղկապված։

«Մարդկության պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մշտական հաղթանակ այն սահմանների նկատմամբ, որոնք տվյալ, որոշակի, ժամանակում դառնում են մարդկության սահմաններ... Բայց... կարծեցյալ սահմանները միայն անհատների սահմաններն են եղել»[3]։

Ըստ ագնոստիկների, բնությունը թաքնվում է մարդուց և չի ենթարկվում նրա ճանաչողությանը։ Օրինակ, Յումը գրել է. «Բնությունը մեզ պատկառելի հեռավորության վրա է պահում իր գաղտնիքներից»[4]։ Ֆոյերբախը նկատի է ունեցել ագնոստիկների հենց այդպիսի պնդումները, երբ գրել է. «Բնությունը չի թաքնվում — ընդհակառակը, նա կառչում է մարդուն

[1] Л. Фейербах, Избр. фил. произведения, т. I, М., 1955, стр. 98.
[2] Նույն տեղում, հատ. 2-րդ, էջ 115։
[3] Նույն տեղում, էջ 185։
[4] О. Юм, Исследование о человеческом уме, 1916, стр. 35.

ամբողջ ուժով և, այսպես ասած, անամոթաբար»[1]։ Նա ընդգծում է, որ բնության մեջ չկան այնպիսի երևույթներ, առարկաների հատկություններ, որակներ, որոնք անթափանցելի լինեին մարդու հինգ զգայարանների համար։ Իսկ եթե բնության մեջ լինեին այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք մենք չկարողանայինք ընկալել մեր զգայարաններով, եթե բնությունը ունենար այնպիսի հատկություններ, որոնք անորսալի լինեին մեր այժմյան զգայարանների կողմից, ապա այդ հատկություններն ու երևույթները իրենց զգացնել կտային իրենց համապատասխանող զգայություններով. սակայն դա չի պատահում, ասում է Ֆոյերբախը։ «Մարդու մոտ հենց այնքան զգայարան կա, որքան անհրաժեշտ է, որպեսզի նա աշխարհն ընկալի նրա ամբողջականության, նրա ընդհանրության մեջ»[2]։ Մենք ոչ մի հիմք չունենք երևակայելու, որ «եթե մարդ ունենար ավելի զգայարաններ կամ օրգաններ, ապա նա կարող էր նաև ճանաչել բնության ավելի շատ հատկություններ կամ իրեր»[3]։

Մեջբերելով այս դատողությունը, Վ. Ի. Լենինը ընդգծել է. «Կարևոր է ագնոստիցիզմի համար»[4]։

Աշխարհի և նրա օրինաչափության ճանաչման հիմնական երաշխիքը, հիմնական պայմանը Ֆոյերբախը համարում է այն, որ մեր մտածողության օրգանը ուղեղը, հանդիսանում է նյութական աշխարհի մասը, ուստի մտածողությունը, որպես ուղեղի գործունեություն, չի կարող լինել սահմանափակ այն մատերիայի ճանաչման մեջ, ինչի արդյունքն է նա։ Ուստի «մտածողությունը, որպես իրական էակի գործունեություն, ի՞նչպես կարող էր չընդգրկել իրական իրերն ու էակները»։ Այդ կարող է պատահել այն ժամանակ, ասում է Ֆոյերբախը, երբ մտածողությունը կտրում ենք մարդուց և վերածում մերկ աբստրակցիայի։

Խոր հավատ ունենալով իրերը ճանաչելու մարդկային ունակության նկատմամբ՝ Ֆոյերբախը հանգեց այն ճիշտ հետևության, որ մարդկային իմացությունը վերջնական ավարտման երբեք չի կարող հասնել. «Իմացության ուժը թվում է նույնչափ անսահմանափակ, որչափ և ինքը՝ ճանաչելի նյութն է»։ Ֆոյերբախի այս միտքը մի կողմից ցույց է տալիս մարդկային իմացության անվերջությունը, նրա ամենազորությունը օբյեկտիվ ռեալականությունը ճանաչելու մեջ, իսկ մյուս կողմից՝ իր մեջ բովանդակում է այն հարցի պատասխանը, թե ինչու մարդկային իմացությունը չի կարող սպառել նյութական աշխարհի ճանաչողությունը։ Դրա պատճառն այն է, որ «կեցությունը ավելի հարուստ է, քան գիտելիքը, կեցությունը գիտելիքի հիմքն է»[5]։

Այստեղից բխում է, որ մարդկային գիտելիքները, ծագելով կեցությունից, հանդիսանում են նրա ադեկվատ արտացոլումը մարդու գիտակցության մեջ։ Եվ ապա, մարդկային գիտելիքները որքան էլ խոր և ճշգրիտ արտացոլեն օբյեկտիվ կեցությունը, երբեք չեն սպառի այն, քանի որ կեցությունը անսահմանորեն հարուստ է։ Այն նախ որ ունի այնքան բազմաթիվ կող-

---

[1] *Л. Фейербах*, т. II, стр. 693.
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 632—633։
[4] *В. И. Ленин*, Философские тетради, стр. 64.
[5] *Фейербах*, т. I, стр. 199.
[6] Նույն տեղում, էջ 335.

մեր ու առանձնահատկություններ, որոնց բացահայտումը հնարավոր չէ գիտելիքների տվյալ մակարդակի պայմաններում, իսկ մյուս կողմից՝ կեցությունը անընդհատ փոխվում ու զարգանում է, և դրա հիման վրա զարգանում ու խորանում են մարդկային գիտելիքները, մարդու իմացական ունակությունները։

Ֆոյերբախը ճիշտ հասկացավ, որ մարդկային իմացության ձգտման և բնության հարաճուն զարգացման միջև կա անվերջ հակասություն։ Սակայն Ֆոյերբախը, ընդունելով տվյալ հակասության գոյությունը, այն չձևակերպեց որպես մտավոր զարգացման «գլխավոր լծակ»։ Այդ հակասության դիալեկտիկական բացատրությունը տվեցին մարքսիզմի կլասիկները։

Ֆր. Էնգելսը գրել է, որ «մարդիկ կանգնած են հակասության առաջ. մի կողմից՝ նրանց առաջ խնդիր է դրված սպառիչ կերպով ճանաչել տիեզերական սիստեմն իր ընդհանուր կապակցությամբ, իսկ մյուս կողմից՝ թե իրենց սեփական բնությունը և թե՛ տիեզերական սիստեմի բնությունը նրանց հնարավորություն չեն տալիս երբևէ լիովին լուծելու այդ խնդիրը։ Բայց այս հակասությունը ոչ միայն այդ երկու գործոնների՝ տիեզերքի և մարդու բնության մեջ է. այն ամբողջ մտավոր առաջադիմության գլխավոր լծակն է կազմում...»[1]։ Եվ այդ հակասությունը լուծվում է շարունակաբար՝ մարդկության առաջընթաց զարգացման շնորհիվ։

Ֆոյերբախը ճիշտ մատնանշեց, որ մարդկային միտքը անընդհատ խորանում է, իմացության մի աստիճանից անցնելով մյուսին, որ գիտության տվյալները միշտ հաստատվում ու լրացվում են հետագա սերունդների կողմից, սակայն օբյեկտիվ ռեալականության արտացոլման պրոցեսը նա չդիտեց որպես դիալեկտիկական պրոցես, որպես հակասությունների առաջացման և նրանց լուծման հավերժական պրոցես։ Այդ պատճառով էլ նա ի վիճակի չեղավ բացահայտելու բացարձակ և հարաբերական ճշմարտության դիալեկտիկական փոխհարաբերությունը. այդ մասին նրա մոտ ոչ մի հիշատակում չկա։

Այսպիսով, Ֆոյերբախը, ագնոստիկական իմացաբանության դեմ մղած պայքարում հենվելով գիտությունների զարգացման տվյալների վրա, ապացուցեց, որ աշխարհն իր էությամբ ու բնույթով միանգամայն ճանաչելի է, որ նրանում անճանաչելի ոչինչ չկա, թեև շատ բան կա, որ դեռ չգիտենք, սակայն դրանք անհրաժեշտաբար կճանաչվեն հետագա սերունդների կողմից։ Այս կապակցությամբ նա հիշատակում է Գալիլեյի խոսքերը՝ ուղղված Կոպեռնիկոսին. «Օհ, եթե դու կենդանի լիներիր և տեսներիր նոր լրացումներն ու ապացույցները քո սիստեմի վերաբերյալ,— որպիսի երանություն կքաղեիր նրանցից»[2]։ Եթե Կոպեռնիկոսը մահվան մահճում խորապես ցավել է, որ իր ողջ կյանքի ընթացքում ոչ մի անգամ չի տեսել Մերկուրի մոլորակը, ապա այժմ,— նշում է Ֆոյերբախը,— աստղագետները այն տեսնում են ամեն վայրկյան. «Այսպես, ապագան բուժում է անցյալի տառապանքները»[3]։ Հետևապես, այն բոլոր հարցերը, որոնք անիմաստ չեն, այլ արժեք ու նշանակություն ունեն մարդկության համար, պատմական զարգացման ընթացքում անհրաժեշտաբար գտնում են իրենց լուծումը։ Ուստի այն, ինչ չի լուծում ներկան, կլուծի պատմական ապագան։ Այս է Ֆոյերբախի հետևությունը։

---

[1] Ֆ. Էնգելս, Անտի Դյուրինգ, 1952, էջ 47։

[2] *Л. Фейербах*, т. I, стр. 355.

[3] Նույն տեղում, էջ 355—356։

Ֆոյերբախը ճիշտ ըմբռնեց այն փաստը, որ իմացության զարգացումը առանց արտաքին աշխարհի երբեք հնարավոր չէ։ Նա իմացության զարգացումը դիտեց օբյեկտիվ պայմանների զարգացման փոփոխման սերտ կապի մեջ։ Ուստի իմացության և իրականության փոխադարձ կապի մատերիալիստական ըմբռնումը նա համարեց աշխարհի ճանաչելիությունը հաստատող կարևոր պայմանը։ Հակառակ իդեալիստների ու ագնոստիկների, որոնք իմացության զարգացումը կտրում են նրա օբյեկտիվ ռեալ հիմքից ու վերածում աբսոլյուտի, Ֆոյերբախը գրել է. «Ես, ընդհանրապես, անպայման հերքում եմ բացարձակը, աննյութականը, ինքնաբավ մտահայեցողությունը, որն իր նյութը քաղում է իրենից. Ես ընդհանուր ոչինչ չունեմ այն փիլիսոփաների հետ, որոնք հեշտ մտածելու համար փակում են իրենց աչքերը։ Ես մտածում եմ զգայություններով, գլխավորապես տեսողության միջոցով, իմ դատողությունները հիմնավորում եմ արտաքին զգայությունների միջոցով ճանաչվող նյութերի հիման վրա, առարկան բխեցնում եմ ոչ թե մտքից, այլ միտքը՝ առարկայից»[1]։

Աշխարհի ճանաչելիության մատերիալիստական կոնցեպցիան Ֆոյերբախին հնարավորություն տվեց բացահայտելու ագնոստիկական հայացքների իմացաբանական արմատների էությունը։ Մասնավորապես, քննադատելով կանտյան ագնոստիցիզմը՝ Ֆոյերբախը գրել է. «Կանտը թույլ տվեց մի հակասություն, որը նրա համար անխուսափելի էր... կեղծ հասկացավ ու մեկնաբանեց մտածողության դրական-բանական սահմանները։ Կանտը այդ սահմանները հասկացավ իբրև ինչ որ սահմանափակում»։ Սակայն այդ սահմանափակումը Ֆոյերբախը համարում է ինչ որ կամայական բան, որն այդ իսկ պատճառով կարելի է առանց դժվարության վերացնել։

Կանտը, անանցանելի սահման դնելով երևույթների և «ինքնին իրի» աշխարհի միջև, փորձում էր սահմանափակել մեր գիտելիքները՝ ապացուցելով նրանց անզորությունը։ Նրա կարծիքով, եթե գիտությունների բնագավառը գիտակցության ապրիորային սկզբունքների օգնությամբ ստեղծված երևույթների աշխարհն է, ապա հավատի բնագավառը այնկողմնային, իմացության համար անմատչելի, «ինքնին իրերի» աշխարհ է, և այդ թվում աստծու հոգու անմահության, կամքի ազատության աշխարհն է։ Ֆոյերբախը հերքեց Կանտի այդ ագնոստիկական ըմբռնումները։ Սակայն նա անպատասխան թողեց այն հարցը, թե ինչու Կանտը սահմանափակում է բանականության սահմանները, ինչու նա նվաստացնում է գիտությունը, ինչու նա տեղ է մաքրում հավատի համար։ Ֆոյերբախը բացատրեց միայն այդ ըմբռնման իմացաբանական արմատը և այն տեսավ բանականությունը նյութական իրականությունից կտրելու սուբյեկտիվ-իդեալիստական մոտեցման մեջ։ Նրա տեսադաշտից վրիպել է Կանտի ագնոստիկական հայացքի դասակարգային էության լուսաբանումը։ Այդ հարցի սպառիչ վերլուծությունը տվեցին մարքսիզմի կլասիկները։

Կանտի ագնոստիցիզմը պայմանավորված էր XVIII դարի Գերմանիայի սոցիալ-դասակարգային պայմանների յուրահատկությամբ։ Կանտի իմացության տեսության նպատակը ոչ թե գիտության հիմքերի ամրապնդումն էր, այլ գիտության հաշտեցումը կրոնի հետ։ «Ինքնին իրի» անճանաչելիության իդեան Կանտի փիլիսոփայության մեջ դարձավ կենտրոնական, որի շուրջը ըստ

[1] *Фейербах*, т. II, стр. 17—18.

էությանն պատվեց նրա «տրանսցենդենտալ» փիլիսոփայությունը։ Այդ իդեան Կանտը վերջին հաշվով զարգացրել է այն նպատակով, որպեսզի հաշտեցնի մատերիալիզմը իդեալիզմի հետ, գիտելիքը՝ հավատի հետ, գիտությունը՝ կրոնի հետ։ «Ես հարկադրված էի սահմանափակել գիտության բնագավառը՝ որպեսզի տեղ տալի հավատին»[1]։

Հենց այդ նկատառումով էլ Վ. Ի. Լենինը գրել է. «Կանտը նվաստացնում է իմացությունը, որպեսզի տեղ մաքրի հավատի համար,— Հեգելը մեծարում է իմացությունը, հավատացնելով, թե իմացությունն աստծու իմացությունն է։ Մատերիալիստը մեծարում է մատերիայի, բնության իմացությունը աստծուն և նրան պաշտպանող փիլիսոփայական սրիկայախմբին ուղարկելով ադրանոց»[2]։ Լենինի այս խորիմաստ բնութագրումից ակնհայտ երևում է, որ ագնոստիցիզմը, իդեալիզմն ընդհանրապես, ծագելով մարդկային իմացության թյուր ըմբռնումից, տանում են դեպի տերտերականություն և դառնում ռեակցիայի հոգևոր գործիքը։ Եվ իրոք, եթե օբյեկտիվ աշխարհը անճանաչելի է, եթե գիտությունը անկարող է բացահայտել ռեալ իրականության օրինաչափությունները, նշանակում է մարդիկ պարզապես զրկվում են աշխարհը գիտակցաբար վերափոխելու հնարավորությունից։

Մարքսիզմի կլասիկները, բարձր գնահատելով ագնոստիցիզմի ֆոյերբախյան քննադատության արժանիքները, նրա մատերիալիստական մեկնաբանությունները, միաժամանակ մատնանշել են թույլ կողմերը։ Ֆ. Էնգելսը գրել է. «Ֆոյերբախի լրացուցիչ մատերիալիստական առարկություններն ավելի սրամիտ, քան խորամիտ են»։ Իհարկե, Էնգելսի դիտողությունը ամենևին չի նսեմացնում Ֆոյերբախի դերը ագնոստիցիզմի քննադատության հարցում, այլ բացահայտում է նրա թերի լինելը։

Էնգելսը նկատի ունի նախ՝ այն հանգամանքը, որ Ֆոյերբախը ագնոստիցիզմը քննադատեց ոչ թե դիալեկտիկայի, այլ գլխավորապես մետաֆիզիկայի տեսանկյունից։ Եվ ապա՝ Ֆոյերբախը իդեալիզմի և կրոնի քննադատության կենտրոնում դրեց մարդկային սեռը։

Այսպիսով, Ֆոյերբախը, թեև իդեալիստական, «ես»-ին հակադրեց մարդկային պրակտիկան ընդհանրապես, որ անկասկած, դրական նշանակություն է ունեցել, սակայն նա չհասավ իմացության մեջ հասարակական պրակտիկայի դերի ըմբռնմանը։

Պրակտիկան այն իմաստով, ինչպես ըմբռնում է Ֆոյերբախը, իհարկե, ոչ մի մատերիալիստ չի ժխտում, որովհետև իդեալիստների համեմատությամբ մատերիալիստների տարբերիչ գծերից մեկն էլ այն է, որ մատերիալիստները ելնում են ռեալ իրականությունից, մարդկանց պրակտիկ կյանքից և ոչ թե աբստրակտ մտածողությունից։ Ֆոյերբախի ծառայությունն այն է, որ նա իդեալիզմի անհեթեթությունները ժխտելու համար իրեն փաստարկում առաջ քաշեց պրակտիկան։

Էնգելսը իր «Լյուդվիգ Ֆոյերբախ» հռչակավոր աշխատության մեջ, քննադատելով ագնոստիկներին և պաշտպանելով մատերիալիստական դրությունը մեր գիտելիքների ստուգման մասին, նշել է, որ ագնոստիցիզմի ամենավճռական հերքումը պրակտիկան է, այն է՝ էքսպերիմենտը և արդյունաբերու-

[1] *И. Кант*, Критика чистого разума, издание 2-е, 1915, стр. 18.
[2] *В. И. Ленин*, Философские тетради, стр. 166.
[3] Ֆ. Էնգելս, Լյուդվիգ Ֆոյերբախ, էջ 14։

թյունը. «Եթե մենք կարող ենք ապացուցել բնության տվյալ երևույթի ըմբռնման ճշտությունը նրանով, որ մենք ինքներս ենք այն առաջացնում, առաջ բերում այն իր իսկ պայմաններից, բացի դրանից, ստիպում ենք նրան ծառայել մեր նպատակներին, ապա կանտյան անըմբռնելի «ինքնին իրի» վերջը հասնում է»:

Պրակտիկան, գիտությունների զարգացման փաստը ամենավառ ապացույցն է ագնոստիցիզմի սնանկությունը ժխտելու և աշխարհի ճանաչելիության մասին մատերիալիստական դրույթի ճշտությունը հաստատելու համար:

Վ. Ի. Լենինը, խոսելով կանտականության մարքսիստական քննադատության մասին, գրել է. «Մարքսիստները (20-րդ դարի սկզբին) կանտականներին և յումիստներին քննադատել են ավելի շատ ըստ Ֆոյերբախի (և ըստ Բյուխների), քան ըստ Հեգելի»[2]: Հասկանալի է, որ Ֆոյերբախյան մատերիալիզմի դիրքերից երբեք չի կարելի տալ ագնոստիցիզմի սպառիչ լուսաբանումը. այդ հնարավոր է միայն դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից:

Սակայն կասկածից վեր է, որ ագնոստիկական իմացաբանության Ֆոյերբախյան քննադատությունը բացառիկ կարևոր դեր է խաղացել, հսկայական չափով օժանդակել է մատերիալիստական իմացաբանության զարգացմանը և այդ պատճառով էլ ըստ արժանվույն գնահատվել է մարքսիզմի կլասիկների կողմից:

Ֆոյերբախի քննադատությունը օգնեց Մարքսին, Էնգելսին, Լենինին և օգնում է այժմյան առաջավոր մտածողներին, բնագետներին՝ ռեակցիոն հոսանքների դեմ մղվող կատաղի պայքարում:

Վ. Ի. Լենինը սուբյեկտիվ իդեալիզմի և ագնոստիցիզմի դեմ մղած պայքարում հաճախ է հենվում Ֆոյերբախի մատերիալիստական դրույթների վրա ինչպես բնության և մատերիայի, ժամանակի և տարածության օբյեկտիվության հարցում, այնպես էլ ագնոստիցիզմի քննադատության հարցում: Լենինը, բացահայտելով Կանտի փիլիսոփայական սիստեմի հակասությունը, նրա ռկիմաստությունը, ցույց տվեց կանտականության «աջ» և «ձախ» քննադատության ողջ էությունը: Ֆիխտեն, նեոկանտականները, մախիստները Կանտին քննադատել են աջից: Նրանք հանդես են եկել ոչ թե Կանտի ագնոստիցիզմի դեմ, այլ ավելի հետևողական ագնոստիցիզմի պաշտպանությամբ: Մախիստները պնդում էին, որ զգայությունը մեր իմացության միակ առարկան է, նրա սահմաններից դուրս ոչինչ չկա: Նրանք ժխտում էին մեր գիտելիքների օբյեկտիվ աղբյուրը, զգայության մեջ տրված օբյեկտիվ ռեալականությունը: Մախն իր փիլիսոփայական հիմնական աշխատությունում՝ «Զգայությունների անալիզ»-ում պնդում է, որ զգայությունները այն «էլեմենտներն» են, որոնցից կազմված է ճանաչելի աշխարհը: Մախի կարծիքով, մեր գիտելիքների օբյեկտը այդ «էլեմենտներն», այսինքն զգայությունների կարգն ու միասնությունն է: Դժվար չէ տեսնել, որ Մախի տեսությունը ոչ մի էական բանով չի տարբերվում Յումի մաքուր էմպիրիզմից. հիմնական տարբերությունը տերմինոլոգիայի մեջ է: Ընդհանուրը սուբյեկտիվ իդեալիստների մոտ այն է, որ նրանք ժխտում են մեր գիտելիքների օբյեկտիվությունը, պաշտպանում են «մաքուր էմպիրիզմը», պնդելով, որ գիտելիքները ծագում են զգայություններից և նրանց սահմաններից դուրս գալ չեն կարող:

---

[1] Մարքս-Էնգելս, Ընտիր երկեր, հատ. 2-րդ, 1950, էջ 474:

[2] *В. И. Ленин*, Философские тетради, стр. 174.

Կանտականների, մախիստների և ժամանակակից իդեալիստների տեսակետով, մարդու զգայությունները, մտապատկերները, հասկացությունները ոչ թե ռեալ իրերի և առարկաների արտացոլումն են, պատճեներ, այլ սոսկ պայմանական նշաններ են, սիմվոլներ, որոնք ոչ մի նմանություն չունեն օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկաների հետ։

Մախիստները, պրագմատիստները, պերսոնալիստները, տրամաբանական պոզիտիվիստները և այլ սուբյեկտիվ իդեալիստներ ժխտում են արտաքին նյութական աշխարհի (առարկաների, իրերի, երևույթների) առկայությունը և ենթադրում, որ մենք գործ ունենք սոսկ մեր զգայությունների, պատկերացումների հետ։ Սուբյեկտիվ իդեալիստները իրը նույնացնում են նրա պատկերի հետ, ուստի և արտացոլման պրոբլեմը, պատկերի համապատասխանությունը առարկային՝ դուրս է հանվում նրանց փիլիսոփայությունից։

Ագնոստիցիզմը, և ընդհանրապես իդեալիզմը ի սպաս է դրվում շահագործող ռեակցիոն դասակարգերի շահերին, որոնք պահանջում են սահմանափակել գիտելիքը, մթագնել աշխատավորական լայն մասսաների գիտակցությունը։ Դրանով պետք է բացատրել ագնոստիցիզմի տարածումը արդի բուրժուական փիլիսոփայության և գիտության մեջ, հատկապես գիտության այն ճյուղերում, որոնք անմիջականորեն կապված են աշխարհայացքի հետ։ Բուրժուական աստղագիտության մեջ տարածվում է այն հակագիտական հայացքը, ըստ որի հնարավոր չէ լուծել երկրի և մյուս մոլորակների ծագման պրոբլեմը. բիոլոգիայում տիրում է այն դոգման, թե անհնար է լուծել կյանքի ծագման պրոբլեմը։ Այդ տեսակետին հարող բիոլոգների «փաստարկումը» կայանում է նրանում, որ գիտությունը չի լուծել և իբր երբեք ի վիճակի չէ լուծելու կենդանի սպիտակուցի սինթեզի պրոբլեմը։ Բուրժուական իդեալիստ-ֆիզիկոսները, ինչպես, օրինակ, Ռորը. Հայդենբերգը և ուրիշներ, ֆիզիկայի նվաճումները օգտագործում են որպես «փաստարկում» ագնոստիցիզմի օգտին, փորձում են «ապացուցել», որ այժմ ֆիզիկան հասել է այնպիսի սահմանների, որից այն կողմը հնարավոր չէ իմացության զարգացումը։ Այդպիսի սահման նրանց տեսակետով կվանտային ֆիզիկայի զարգացման ներկա մակարդակն է։ Իհարկե, իդեալիստների դատողությունները բնության անճանաչելիության մասին հիմնված են ոչ թե գիտության ավյալների, այլ մոնոպոլիստական բուրժուազիայի շահերի վրա, սրանում է արդի բուրժուական փիլիսոփայության և գիտության մեջ ագնոստիցիզմի լայն տարածման սոցիալական էությունն ու պատճառը։

1923 թ. Վիեննայի ռեակցիոն մաթեմատիկոսները, որոնք գտնվում էին Մախի ուսմունքի անմիջական ազդեցության տակ, ստեղծեցին, այսպես կոչված, «տրամաբանական պոզիտիվիստների» կամ «տրամաբանական էմպիրիկների» դպրոցը։ Այդ դպրոցի գլխավոր ներկայացուցիչներ՝ Բերտրան Ռասսելը, Վիտգենշտեյնը (Անգլիայում), Կառնապը և ուրիշներ ժխտում են փիլիսոփայության առարկայի օբյեկտիվությունը, արտաքին աշխարհի գոյությունը ընդհանրապես։ Ռասսելի կարծիքով՝ աշխարհը, բնությունը մեր տրամաբանական պատկերացման արդյունքն են։ Ինչպես Ռասսելի, այնպես էլ մյուսների համար փիլիսոփայության հիմնական սկզբունքը տրամաբանական ձևի գաղափարն է։ Տրամաբանական ձևի տակ Ռասսելը հասկանում է նախադասության բաղկացուցիչ մասերի միավորման եղանակը, ընդ որում նախադասությունների մեջ բաղկացուցիչ մասերը շարունակ փոխվում են, իսկ ձևը մնում է

անփոփոխ։ Այս իմաստով ձևերը փիլիսոփայական տրամաբանության օբյեկտներն են։ Այդ դատողության համաձայն բնության վերաբերյալ մեր պատկերացումները բխում են ձևական-տրամաբանական վերլուծությունից։ Զբաղվել նախադասությունների ձևերի քննարկմամբ,— ասում է Ռասելը, - նշանակում է, զբաղվել աշխարհի տրամաբանական ձևի հարցով։ Հետևապես, նրա տեսակետով՝ աշխարհի ռեալականությունը բխում է պարզ նախադասությունների ֆունկցիաներից։

Պոզիտիվիստների կարծիքով, գիտությունը «նախադասությունների սիստեմ» է, իսկ «նախադասությունները պետք է համեմատվեն նախադասությունների հետ» և ոչ թե ռեալ իրականության հետ։ Այդ տեսակետի համաձայն մեր իմացությունը օբյեկտիվ ճշմարտության նշանակություն ունեցող ստույգ իմացություն չի կարող լինել։ Տրամաբանական պոզիտիվիստները, ինարկե, երբեք չեն խոսում «ինքնին իրի» և «անճանաչելիության» մասին, որովհետև նրանք նման դատողությունը համարում են «անհեթեթություն»։ Սակայն ըստ էության նրանք ժխտում են աշխարհի ճանաչելիությունը, քանի որ բացասում են մեր գիտելիքների օբյեկտիվությունը։

Վ. Ի. Լենինը գրել է. «Ֆոյերբախը հերքել է Ավենարիուսի սոֆիզմը («ամփոփել դիտողին»), չգիտենալով «նորագույն պոզիտիվիզմը», բայց լավ գիտենալով իդեալիստական հին սոֆիզմները»[1]։ Լենինի այս փայլուն գնահատականը սպառիչ կերպով դրսևորում է իդեալիզմի և ագնոստիցիզմի ֆոյերբախյան քննադատության էությունը, Ֆոյերբախի մատերիալիստական ուսմունքի պատմական տեղը, ինչպես նաև նրա նշանակությունը արդի բուրժուական փիլիսոփայության դեմ մղվող պայքարում։

Հակառակ ագնոստիկական իմացաբանության, Ֆոյերբախը ապացուցեց, որ մարդկային բանականությունն ընդունակ է իր զարգացման մեջ բացահայտելու բնության ամենախոր գաղտնիքները։

Ֆոյերբախը ճիշտ ըմբռնեց, որ մարդկային իմացության ձգտման և բնության հարաճուն զարգացման միջև կա անվերջ հակասություն, սակայն նա այդ հակասությունը չձևակերպեց որպես մտավոր զարգացման «գլխավոր լծակ»։

Ճիշտ ըմբռնելով իդեալիստական և ագնոստիկական հայացքների իմացաբանության արմատները, Ֆոյերբախն անտեսեց դրանց դասակարգային իմաստը։ Այն հանգամանքը, որ Ֆոյերբախը մետաֆիզիկ էր և հեռու մնաց հասարակական պրակտիկայի դերի ըմբռնումից, նրան հնարավորություն չտվեց զարգացնել ագնոստիցիզմի իսկական հերքումը։ Ագնոստիցիզմի էության կլասիկ լուսաբանումը իրավամբ պատկանում է մարքսիզմին։

---

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. XIV, էջ, 99։